ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Անժելա Սուրենի Մնացականյանի «ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունն անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համատեքստում արտաքին ռազմական քաղաքականության մասնագիտական հետազոտությունը, մեր պետության առջև ծառացած հիմնական մարտահրավերների ու սպառնալիքների վեր հանումն ու հայկական երկու հանրապետությունների անվտանգության նոր ճարտարապետության ուրվագծումները հայրենական քաղաքագիտական մտքի առջև ծառացած խիստ արդիական ու հրատապ հիմնախնդիրներից են: Բանն այն է, որ 2020թ 44-օրյա պատերազմի ծանր հետևանքները էականորեն փոխել են Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրը, ինչպես նաև առաջացրել են Հայաստանի անվտանգային ճարտարապետության խորը ճգնաժամ: Հետևաբար՝ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում վերանայել ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունը, մշակել նոր իրողություններից բխող պետության արտաքին ռազմական քաղաքականության հիմնական տարրերին համահունչ նոր ռազմավարություն ու մարտավարություն: Այս տեսնակյունից հեղինակի՝ պաշտանության ներկայացված թեման միանշանակ արդիական ու հրատապ կարելի է համարել:

Սույն ատենախոսության շրջանակներում համեմատական վերլուծության են ենթարկված ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության ներքին և արտաքին գործոնները՝ հաշվի առնելով ժամանակակից պատերազմների հիբրիդային չափումները: Աշխատանքում համակողմանիորեն դիտարկված են ռազմաքաղաքական դաշինքների և տարածաշրջանային պետությունների անվտանգային գործոնները, որոնք մեծապես պայմանավորում են ՀՀ անվտանգային միջավայրը: Ատենախոսի դիտարկումներում

առանցքային տեղ են զբաղեցնում Հայաստանի անվտանգային ճարտարապետության խորը ճգնաժամի հաղթահարման ուղիները: Այս համատեքստում Ա. Մնացականյանը հիմնավորում է ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը: Հեղինակի կարծիքով, Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով գոյաբանական անվտանգային մարտահրավերների առջև՝ ունի անվտանգության երկընտրանքի ընդգծված հատկանիշներ, ինչպես ժամանակին ունեցել կամ շարունակում են ունենալ մի շարք փոքր պետություններ: Ավելին, Հայաստանը գտնվում է բարդ ու սպառնալիքներով լի անվտանգային միջավայրում, որի աշխարհագրական չափանիշները համեմատելի և նույնիսկ համադրելի են մի շարք փոքր պետությունների հետ: Ներկայիս ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգը, փոքր պետությունների միջավայրը դարձնում է ավելի անկայուն և սպառնալիքներով լի, քանի որ յուրաքանչյուր դերակատար փորձում է առաջնորդվել իր «խաղի կանոններով»: Ունենալով միջազգային հարաբերությունների ու անվտանգության նորմերի և արժեհամակարգի ազգային տեսլականը՝ փոքր պետություններն ունեն քաղաքական, տնտեսական, անվտանգային, նորմատիվային և աշխարհակարգային ազդեցություն ունենալու հավակնություններ:

Ժամանակակից միջազգային քաղաքական գործընթացներում արդիական է արտաքին ռազմական քաղաքականության հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական այպես էլ մեթոդաբանական չափումները: Աշխատանքում ատենախոսը արտաքին ռազմական քաղաքականության և ռազմական անվտանգության ապահովման համակարգում կարևորում է «խելացի» դիվանագիտության գործիքակազմի կիրառումը: Ըստ հեղինակի՝ դրա առաջնահերթ խնդիրն է ստեղծել արտաքին բարենպաստ պայմաններ՝ նվազագույն ուժերով երկրի պաշտպանությունն ապահովելու համար: Այդ նպատակով ատենախոսը համակողմանիորեն դիտարկել է արտաքին ռազմական քաղաքականության ինստիտուցիոնալացման գործընթացը՝ գնահատելով աշխարհաքաղաքական մարտահրավերները և Հարավային Կովկասի ինտեգրման ներկայիս մակարդակը:

Ատենախոսության առաջին՝ «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության էությունը և հիմնական բնութագրիչները» գլխում քննարկվում է ռազմական քաղաքականություն հասկացությունը և ինստիտուցիոնալ

առանձնահատկությունները, տրվում է ՀՀ ռազմական քաղաքականության սահմանումը: Վերլուծվում են ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթները, ինչպես նաև ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը՝ ՀՀ ռազմական քաղաքականության համատեքստում: Ռազմական քաղաքականությունը որոշ դեպքերում դուրս է գալիս զուտ ռազմական ոլորտի շրջանակներից և ընդգրկում է պետության գործունեության մյուս բնագավառները: Հիմնվելով ռազմական փորձագետների վերլուծությունների և հաշվի առնելով ռազմաքաղաքական առաջատար պետությունների ռազմական քաղաքականության փորձը, հեղինակը ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունը ձևակերպել է, որպես պետական մարմինների կողմից ռազմաքաղաքական ոլորտում իրականացվող կարևորագույն գործունեություն, որը նպատակաուղղված է ազգային անվտանգության արժեքների պահպանմանը, դաշնակցային հարաբերությունների և դաշինքների ամրապնդմանն ու նորերի ձեռքբերմանը, ինչպես նաև ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացմանը: Ա. Մնացականյանը վեր է հանել ռազմական քաղաքականության տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և ռազմական բաղադրիչներից և վերլուշել վերջիններիս փոխկապակցվածությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականությունը բազմակողմ գործակցության շրջանակներում» գլխում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում և Հայաստանի Հանրապետություն-ՆԱՏՕ ռազմական համագործակցության դերը ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության մեջ: Հեղինակը ներկայացրել է Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին, որպես ռազմատեխնիկական, զենքի ու ռազմական տեխնիկայի ձեռքբերման և յուրացման տեսանկյունից ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածությունն ու մարտունակությունը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը: Ա. Մնացականյանը վերլուծել է Հայաստանի համագործակցությունը Հյուսիսատլանտյան դաշինքի հետ, որպես հավասարակշռության պահպանման միջոցով և Հայաստանի համար անվտանգության բազմաշերտ համակարգ ստեղծելու գործիք:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության երկկողմ արտաքին ռազմաքաղաքական կապերը» գլխում դիտարկվում են Հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների նշանակությունը ՀՀ ազգային անվտանգության երաշխավորման գործում, Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների առանձնահատկությունները, Իրանի Իսլամական Հանրապետություն դերը ՀՀ ազգային անվտանգության համակարգում և ՀՀ-ԱՄՆ ռազմաքաղաքական հարաբերությունների ներկա փուլը և զարգացման հնարավորությունները: Ատենախոսության մեջ վեր են հանված նշված համագործակցությունների զարգացմանը խոչընդոտող պատճառները և ներկայացրել են առաջարկությունները վերջիններս հաղթահարելու համար, ինչպես նաև հեղինակը վերլուծել է վերոհիշյալ երկրների ռազմաքաղաքական համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի հետ, վերջիններս ներկայացնելով որպես տվյալ ուղղություններով ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության զարգացմանը խոչընդոտող գործոններ:

Միաժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ աշխատանքը զերծ չէ նաև որոշ բացթողումներից և թերություններից, որոնցից, մասնավորապես կառանձնացնեինք հետևյալները՝

1. Հեղինակը, որպես ՀՀ ռազմական քաղաքականության հիմնասյուներ նշել է պաշտպանական բարեփոխումները, ռազմական դիվանագիտությունը և ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, կարծում ենք աշխատանքը միանշանակ կշահեր, եթե հեղինակը, որպես հենասյուն դիտարկեր նաև ռազմական կրթությունը:
2. Ատենախոսը խորը և համապարփակ ընդգրկումով վերլուծել է ՀՀ-ՌԴ, Հայաստան-Իրան, Հայաստան-Վրաստան և Հայաստան-ԱՄՆ, հարաբերությունները՝ ռազմական պրիզմայի ներքո: Կարծում ենք աշխատանքը ավելի կշահեր, եթե ատենախոսը անդրադառնար նաև ՀՀ-Հունաստան և ՀՀ-Հնդկաստան հարաբերություններին:
3. Կարծում ենք աշխատանքում նպատակահարմար էր ներառել նաև ՀՀ-ԵՄ, ՀՀ-ԵԱՀԿ հարաբերությունների ուսումնասիրությունը, մանավանդ, որ առանձին ուսումնասիրվում է ՀՀ-ԵԱՏՄ հարթությունը:

4. Կարծում ենք, որ ատենախոսության շրջանակներում լրացուցիչ հստակեցման կարիք ունեն նաև «ռազմական քաղաքականություն» , «արտաքին ռազմական քաղաքականություն», «պաշտպանական քաղաքականություն» հասկացությունները:

Այնուամենայնիվ, վերանշյալ դիտարկումները էականորեն չեն ազդում ատենախոսության ընդհանուր բովանդակության և գիտական արժեքի վրա: Հեղինակի հրատարակած տասնմեկ գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Աշխատանքը գրված է պատշաճ գիտական լեզվով, առկա է նոր տեղեկատվական միջոցների կիրառությունը, օգտագործված գրականությունը հարուստ է, գիտականությունը պահված է: Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ որպես պաշտոնական ընդդիմախոս՝ գտնում եմ, որ **Անժելա Սուրենի Մնացականյանի «ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունն անվտանգության ապահովման համատեքստում»** թեմայով՝ ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Վ. Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Մարտիրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, բան. գիտ. թեկնածու՝ **Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

09.02.2023